ՀՀԴ-Ն ԵՎ Կ.ՊՈԼՍԻ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ (1909 – 1915թթ.)

Մ.Վ.ՀՈՎՍԵՓՅԱՆ

1909 - 1915թթ. Օսմանյան Թուրքիայի մայրաքաղաք Կ.Պոլսում լույս են տեսնում Հայ հեղափոխական դաշնակցության (այսուհետև՝ ՀՀԴ) «Ազատամարտ» օրաթերթը և «Ուսանող» ու «Երկունք» ամսաթերթերը: Դրանք ՀՀԴ-ի գաղափարախոսն են և ժամանակաշրջանի իրադարձությունները վերլուծում ու գնահատում են՝ ելնելով իրենց կուսակցության ծրագրային մեկնակետերից: Քննենք մինչև 1918թ. ՀՀԴ-ի դավանած հայացքները, քանզի Հայաստանի Հանրապետության հռչակումից հետո (1918) կուսակցությունը փոխել է իր ծրագիրը (1919), որն ընդունում է առ այսօր:

Հայ հեղափոխական դաշնակցության հիմնադրմանը նպաստող հանգամանքներից կարևորը հայոց պետականությունը վերականգնելու և հայերի՝ հարատևելու ձգտումն է: Մեր ժողովուրդը մշտապես, երբ զրկվել է իր քաղաքական անկախությունից ու նվաճվել այլազգիների կողմից, պայքարել է կորցրածին վերստին տիրանալու անսպառ ցանկությամբ: Այդ ազատամարտը հատկապես դրամատիկ բնույթ է ստանում Հայաստանի՝ Օսմանյան Թուրքիայի և Սեֆյան Պարսկաստանի միջև 1555թ. բաժանվելուց հետո, որով հայերը մատնվում են «չարչարանքի բոլոր ձևերուն՝ աշխարհի ամենեն բարբարոս ռեժիմին տակ» : XVI դ. սկսած՝ ազատասեր հայորդիները որոնել են ստրկացումից, ուծացումից և իբրև ազգություն ոչնչացվելուց փրկվելու ուղիներ: 1828թ. Թուրքմենչայի պայմանագրով Արևելյան Հայաստանն ազատվում է պարսկական գերիշխանությունից ու միացվում Ռուսաստանին: Դրանով համեմատական կարգով բարվոքվում է արևելահայերի տնտեսական և մշակութային կացությունը: Նրանց, ի տարբերություն արևմտահայերի, այլևս՝ չէր սպառնում գոնե ակնհայտ ցեղասպանության վտանգը: Այս իրողությամբ հայոց ազատագրական շարժումը կարծես մտնում է մի նոր շրջան. ամենքին հուզում է մեկ խնդիր. արևմտահայերին ազատագրել թուրքական ենթակայությունից, քանզի օսմանյան բռնապետությունում նրանք դատապարտված էին մահվան: «Քրդական ավարառությունք և սպանությունք ամեն կողմ անապահովություն, ամեն կողմ լքում ու անկում առաջ բերած են... Ժողովուրդը կճնշվի հարստահարությանց և տրոց ծանրության տակ, պանդխտությունը և գաղթականությունը կամայնացունեն մեր երկիրը: Թուրքը կուզե հազարավոր տարիներ ապրող հայ ազգը բնաջինջ անել աշխարհիս վրայեն» - գրում է Թիֆլիսում հրապարակվող «Արձագանք» թերթը[2]: Օսմանահպատակ հայերը դարեր շարունակ ենթարկվում էին հարստահարությունների, կեղեքումների՝ չունենալով քաղաքական, քաղաքացիական տարրական իրավունքներ, կյանքի ու գույքի ապահովություն: Արևմտահայերի ոչնչացման ծրագիրը թուրքական կառավարությունը իրականացնում էր տարբեր միջոցներով. պարբերաբար կազմակերպում էր ջարդեր, ազգային,

---

[1] Մ.Վարդանյան, ՀՀԴ պատմություն, Ե., 1992, էջ 13:

[2] Արձագանք, 1884, № 40:

կրոնական թշնամանք էր ներարկում հայերի և կայսրության մուսուլմանական հավատքի ժողովուրդների միջև՝ վերջիններին օգտագործելով որպես հայասպան գործիք, նաև փակում էր հայկական մշակույթի օջախները, մամուլը: Այս ամենից բացի, Թուրքիայում թե՛ բռնի, թե՛ հատուկ մշակված ագրարային, հարկային քաղաքականությամբ արևմտահայերից խլում էին պապենական հողակտորները, նրանց դարձնում հողազուրկ ու փաստորեն ստիպում անթիվ ու բազմապիսի հարկապարտքերը մարելու համար գրավ դնել, վաճառել ընտանիքները կերակրող հողաբաժինները, գնալ պանդխտության:

Հայության ազատատենչ ոգորումները երբեք չեն դադարել: Արդեն XIX դարում հայ հասարակական-քաղաքական մտքի ականավոր ներկայացուցիչ, հոգևորական գործիչ Մկրտիչ Խրիմյանը քարոզում է, որ ժողովուրդը պիտի գիտակցի, թե որքան թանկ է ազատության գինը. «Աչխարհիս Փրկիչ զայն յուր խաչով և արյունով գնեց... Մի՞թե դու ցանկալի ազատություն առանց զոհի և արյան, ձրի ստանալ կուզես» [3]: Ազգի ինքնիշխանությանը կամովին զոհաբերվողները թողնում էին տուն ու տեղը, վերցնում իրենց խաչ-հրացանը և գինվորագրվում ֆիդայի-հերոսամարտիկների խմբերին: Սկսված շարժումը զորանում է XIXդ. երկրորդ կեսից, երբ արևմտահայությունն ազգային ինքնագիտակցության, ինքնաճանաչման զարթոնք է ապրում. ընդունվում է Ազգային սահմանադրությունը (1860թ.), բացվում են դպրոցներ, մշակութային կենտրոններ, մեկը մյուսի հետևից տպագրվում են թերթեր ու ամսագրեր: Արևմտահայաստանը, ավելի քան երբևէ, կապվում է Կ.Պոլսի հետ՝ ազգային, հոգևոր ու մշակութային կապերի նոր դրսևորումներով: Մի հայտնի չափով ժողովրդավարական բնույթ են ստանում Կ.Պոլսի պատրիարքարանի և գավառական առաջնորդարանների փոխհարաբերությունները, գավառը կենտրոնի հետ կապվում է առավել սերտ առնչություններով, ինչն, իր հերթին, դրականորեն է ներգործում ազգային զարթոնքի վրա: Արևմտահայերի մեջ ազատագրության հույսեր են արթնանում մանավանդ 1877 - 1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից, Օսմանյան կայսրությունից որոշ երկրների ազատագրվելուց (Բալկաններ), Բեռլինի համաժողովից և բարենորոգումների կամ Հայկական հարցի ի հայտ գալուց հետո:

Ժամանակակիցները պատմում են, որ վերը թվարկված իրադարձությունները ազգային նոր շարժումների մղիչ ուժ են հանդիսանում՝ ծնելով մեկից ավելի ազգային ու հեղափոխական կազմակերպություններ [4]:

XIXդ. 80-ականներին հայ հասարակական-քաղաքական գործիչները, որոնց հայացքները ձևավորվել էին բալկանյան ժողովուրդների ազատագրական պայքարի, Հայկական հարցի, ռուսական հեղափոխական շարժման, մասնավորաբար «Նարոդնայա վոլյա» կազմակերպության ու եվրոպական փիլիսոփայական, հասարակագիտական ուսմունքների ազդեցությամբ, վստահաբար կարծում են, որ այլևս բավական է մամուլի և գրականության միջոցով քարոզչությամբ զբաղվելը: Պետք է խոսքից գործի անցնել՝ գիտակցական, նպատակային ու կազմակերպված կռվի համար: «Մեկ հատիկ վերք կար այն ժամանակ հայ ազգային մարմնույն վրա. թրքահայոց

[3] Խրիմյան Հայրիկ, Երկեր, Ե., 1992, էջ 445:
[4] Հայրենիք, 1924, № 10, էջ 54:

կացությունը, զոր հարկ էր դարմանել ամեն գնով»[5]: Այդ սուրբ գործի կենսագործման համար պահանջ է զգացվում նույն դրոշի շուրջը միավորել ողջ հայությանը: Եվ քանի որ մինչ այդ գոյություն ունեցող կուսակցություններն անընդունակ էին համախմբել սրտացավ ու մարտունակ անձնազոհներին, ուստի կազմակերպական աշխատանքների համակարգման և համազգային պայքարը ղեկավարելու նպատակով 1890թ. ամռանը հիմնվում է նոր, մարտական-քաղաքական կուսակցություն՝ «Հայ հեղափոխականների դաշնակցությունը», որը կոչված էր «համադրելու մեկ հզոր և ներդաշնակ բանակի մեջ երկրի ու գաղութներու բոլոր ըմբոստ, հեղափոխական խմբումները», հանուն Արևմտյան Հայաստանի քաղաքական և տնտեսական ազատության՝ ընդհանուր-ապստամբության միջոցով: Կուսակցության պաշտոնաթերթ «Դրոշակը» (Ժնև, 1891 - 1930), բացատրում է, թե քանի որ տաճկաց կառավարությունը չի ուզում որևէ բարենորոգում անել Թուրքահայաստանում, իսկ Եվրոպան չի կամենում հայերի համար երկու զինվորի արյուն անգամ թափել, ապա տաճկահայերի կողմից անօգուտ ու վտանգավոր է ապավինել օտարներին: «Մեզ մնում է միայն դիմել ժողովրդական ապստամբության»: Թերթն ավելացնում է, որ դրա իրագործմանն է ծառայելու «Հայ հեղափոխականների դաշնակցությունը»՝ հայոց բողոքի և վրեժխնդրության մարմնացումը :

Նորածին կուսակցությունը շուտով անօրինակ ու անձնուրաց նվիրումի գործելակերպով գրավում է թուրքական և ռուսական կառավարությունների ուշադրությունը՝ հայդուկային տիպի ինքնապաշտպանական մարտավարությամբ մտահոգություն պատճառելով նրանց: Սակայն հեղափոխական գործունեությունը կուսակցությանն անդամագրվածներին անակնկալներ է մատուցում, չիմացված ճշմարտություններ բացահայտում արևմտահայերի կենսամակարդակի ու նրանց պայքարունակության աստիճանի մասին: Հայ հեղափոխականների մի մասը կարծում էր, որ տաճկահայերը դեռևս անպատրաստ են ոչ միայն ընդհանուր ապստամբության, այլև ինքնապաշտպանության, որ ստրկամտությունը ներթափանցել է լայն խավերի ուղն ու ծուծը, իսկ տվյալ հանգամանքներում Օսմանյան կայսրությունում առայժմ հարկ է հրաժարվել անկախ Հայաստանի երազից ու գոհանալ գոնե բռնապետական վարչակարգի փոփոխմամբ ժողովրդական-ռամկավարականով, հայաշատ գավառներում վարչական ինքնավարության հաստատմամբ և բարենորոգումների անցկացմամբ այդպիսով Թուրքիայում ապահովելով հաբաղատ ժողովրդի թեկուզ միայն հայեցի ու բարեկեցիկ կյանքը :

Մեկ-երկու տարում Հայ հեղափոխականների դաշնակցության մեջ առաջ են գալիս գաղափարական տարաձայնություններ: Ընդդիմադիրները, այլախոհ կուսակցությունները առանձնանում են և շարունակում առանձին գործել՝ համաձայն իրենց սկզբունքների: Կուսակցությունը անվանափոխվում է ու կոչվում Հայ հեղափոխական դաշնակցություն: Եթե սկզբնապես Դաշնակցության անդամները հասարակական-քաղաքական տարբեր մտայնության տեր մարդիկ էին, որոնք միավորվել էին նույն գործի՝

---

[5] Մ. Վարանդյան, Նշվ. աշխ., էջ 39:

[6] Հայրենիք ամսագիր, Բոստոն, 1924, № 10, էջ 54 - 62:

[7] Դրոշակ, 1891, № 1, էջ 4:

[8] Մ. Վարդանյան, Նշվ. աշխ., էջ 95 - 97:

հեղափոխական ճանապարհով տաճկապատկան Հայաստանի քաղաքական և տնտեսական ազատագրման համար, ապա այժմ այն ոչ թե հեղափոխականների կամ հեղափոխական մարդկանց միություն էր, այլ հեղափոխական դաշնակցություն, այսինքն՝ հեղափոխական կոնկրետ ծրագիր հետապնդող ու հեղափոխական գործելակերպով կուսակցություն, միով բանիվ՝ դաշնակցային իմաստով հեղափոխականների կազմակերպություն: «Հիմա նա նույն մտածումը և ծրագիրն ունեցող հեղափոխականների կուս. միություն է ու ոչ թե նույն նպատակն ունեցող հեղափոխականների դաշնակցություն, - գրում է դաշնակցական ականավոր գործիչ Նիկոլ Աղբալյանը :

1892թ. Դաշնակցության առաջին Ընդհանուր ժողովում բազմակողմանի քննարկումներից հետո ընդունվում է կուսակցության ծրագիրը՝ իր հիմնական նպատակը հայտարարելով. նպաստել Ռուսաստանին և Թուրքիային հպատակ հայ ժողովրդի քաղաքական ու տնտեսական բարեկեցությանը, ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք կթույլատրեն «նորան մտնել ընդհանուր մարդկության զարգացման շավղի մեջ»[9]: ՀՀԴ-ն գտնում էր, որ հայության անմարդկային դրության պատճառը միապետական կարգերն են, որոնց տապալմամբ (այն էլ՝ հեղափոխության միջոցով) կլուծվեն առկա հիմնախնդիրները: «Պետք է ուրեմն դեն ձգել» երկրի բոլոր անիրավությունների պաշտպան տաճիկ կառավարությանը, հաստատել ժողովրդական-ռամկավարական իշխանություն, ազգերի և դավանությունների հավասարություն, աշխատանքի ապահովություն, խղճի, խոսքի, համոզմունքների ազատություն[10]:

Դաշնակցությունը թեև հանդես էր գալիս «ժողովրդապետության» (դեմոկրատիզմի), «ընկերվարության» (սոցիալիզմի) սկզբունքներով՝ հավատալով, որ «ընկերվարությունը դեմոկրատիզմն է»՝ «հասցուցած իր տրամաբանական եզրակացության», իր զարգացման բարձրագույն հանգրվանին, նաև հավատալով, որ ընկերվարությունն աշխատավորությանը պարգևում է բարօրություն ու ամեն տեսակ լուծերից ձերբազատված կյանք, բայց այն զուտ ընկերվարական «կուսակցություն մը» չէ: ՀՀԴ-ի ընկերային-փիլիսոփայական աշխարհայացքը կառուցվում էր հետևյալ գաղափարի վրա. «Ժողովուրդն է, որ պետք է իշխե Հայաստանի մեջ՝ լիակատար վեհապետական իշխանությամբ»[12]:

Այսպիսով Դաշնակցությունն իր գոյության առաջին տասնամյակներին, չհերքելով ազգային անկախությունը, համոզված էր, որ արևմտահայերի բարեկեցության նախապայմանը Օսմանյան կայսրության ներքին բարեշրջումն է և ոչ թե անկախ Հայաստանի հիմնումը: Նա մարտահրավեր է նետում բռնապետությանը. «Մենք... հակառակ ենք այն հայացքներին, որոնք ժողովրդի դրության բարեփոխումն անպայման կապում են միմիայն նրա անկախության հետ»[13]: Երբ ուսումնասիրում ենք Դաշնակցության հիմնադիրներից, առաջամարտիկ մտավորականներից մեզ հասած աշխատությունները, հուշագրությունները, քաղաքական վերլուծումները, չենք

---

[9] Ն.Հանգույց, Մտածումներ ՀՀԴ մասին, Ե., 1992, էջ 71 - 76:
[10] Դրոշակ, 1892, № 3, էջ 4:
[11] Նույն տեղում, 1894, № 10, էջ 1 - 3, 1894, № 11, էջ 1 - 4:
[12] Մ.Վարդանյան, Նշվ. աշխ., էջ 58, էջ 102 - 106:
[13] Դրոշակ, № 5, 1893, էջ 1:

կարող միակողմանիորեն մեղադրել նրանց՝ իրենց տեսակետի համար, որովհետև այդ հավատամքը արարվել է ժամանակի խճողված ու բարդ իրականության թելադրանքով: Հրաժարվելով անկախությունից՝ ՀՀԴ-ն կամեցել է պահանջել հնարավորը, իրագործելին՝[14] դա պատճառաբանելով Արևմտահայաստանի աշխարհագրական դիրքով, ազգաբնակչության ցեղային, ընկերային կազմով և ժամանակի պատմական անցուդարձերով. «Հայ ազգը բաժանված է այնպիսի ազգերու և պետություններու մեջ ու շրջապատված է այնպիսի ժողովուրդներով, որ անոր համար խելակորույս ինքնասպանություն պիտի ըլլար, եթե հավակներ անկախ Հայաստան ստեղծելու»[15]: Իսկ կուսակցության տեսաբան Մ.Վարանդյանն ասում է, թե հնարավոր է, որ իր գաղափարակիցները մտովի Տաճկահայաստանի ինքնավարության մեջ տեսել են «Հանգրվան մը դեպի... հայկական անկախություն», բայց հնարավոր է և հակառակ ենթադրությունը, քանզի «անոնք գուցե... բնավ հույս չունեին թե վերը թվարկված պատճառներով «երբևիցե կարենար» հիմնադրվել «անկախ Հայաստան մը»[16]:

Փաստորեն, ՀՀԴ-ի քաղաքական պահանջը «ավելի չէր, քան լայն ինքնավարություն հայաբնակ գավառների» ու նոր վարչաձևի տակ իր բնակավայրում ապրող բարեկեցիկ հայ ժողովուրդ: Ընդ որում, կուսակցությունը հայ տարրի բնակավայրը հասկանում էր ոչ պատմական իմաստով, այլ՝ խտության չափով: «Մենք պահանջում էինք ինքնավար հայ շրջաններ՝ մեկը՝ Ռուսաստանում և մյուսը՝ Տաճկաստանում, վերջապես զատ ու քաղաքականապես անանջատ», այսինքն՝ «պետական հանուր գործերը թողնել պետության և ներքին գործերը վարել մեր ձեռքով»: Մի խոսքով՝ դառնալ պետություն՝ պետության մեջ[17]:

«Մեր հավատամքը» հոդվածում Հարություն Շահրիկյանը թվարկում է Դաշնակցության պահանջները պետական ու ազգային «ներքին կուլտուրական» կյանքի համար՝ չեշտելով կուսակցության գլխավոր ուղեգիծը. «Մենք կպաշտպանեինք և կպաշտպանենք շահերով ներդաշնակավորված կեդրոնաձիգ ու համայնաշեն ազգություններու օսմանյան միությունը»[18]:

Բավական տքնաջան աշխատանք կատարելով դավանած գաղափարները հայությանը հասցնելու ուղղությամբ՝ ՀՀԴ-ն մշտապես գիտակցել է քաղաքական պայքարում քաղաքականապես ազդեցիկ պարբերական մամուլի կարևորությունը: Արդեն նշեցինք կուսակցության ամսաթերթ «Դրոշակի» մասին: Ցրեզնոյում տպագրվում են «Ասպարեզ» (1890 - 1930), Վառնայում «Շարժում» (1898 - 1907), Բոստոնում՝ «Հայրենիք» (1899 - 1930) լրագրերը: Դաշնակցական մամուլը ծաղկում է ապրում 1900-ական թվականներին: Իրար են հաջորդում մեկ տասնյակից ավել թերթեր, ամսագրեր, ընդ որում՝ հաճախ միևնույն լրագիրը տպագրվում էր տարբեր խորագրերով, քանի որ կառավարական համապատասխան մարմիններն արգելում էին դրանցից շատերի հրատարակումը[19]:

---

[14] Մ.Վարդանյան, նշվ. աշխ., էջ 101 - 105:
[15] Ատոմ, Բարենորոգումներու հարցը, Կ.Պոլիս, 1914, էջ 73:
[16] Մ.Վարդանյան, նշվ. աշխ., էջ 105:
[17] Ն.Հանգույց, նշվ. աշխ., էջ 77 - 82:
[18] Հ.Շահրիկյան, Մեր հավատամքը, Կ.Պոլիս, 1910, էջ 9 - 13:
[19] Մինչև 1915թ. տպագրված դաշնակցական թերթերից արժե հիշատակել Թիֆլիսում լույս տեսած «Հառաջը» (1905), «Ալիքը» (1906), «Երկիրը» (1906), «Զանգը» (1906),

Շարունակելով դաշնակցական մամուլի ավանդույթները՝ Թուրքիայի մայրաքաղաք Կ.Պոլսում լույս են տեսնում «Ազատամարտ» օրաթերթը (1909 - 1915) և «Ուսանող» (1909 - 1914) ու «Երկունք» (1912 - 1914) ամսաթերթերը:

ՀՀԴ-ի հասարակական-քաղաքական հայացքների մասին ընդհանուր պատկերացում ունենալուց հետո, երբ ընթերցում ենք այդ երեք պարբերականները, համոզվում ենք, որ նրանք Դաշնակցության գաղափարախոսներն էին ու հիմնվել էին նրան ծառայելու, նրա դավանանքը ժողովրդին մասսայաբար ներկայացնելու և հայությանը ազգապահպան ուղի ցույց տալու ցանկությամբ: «Ազատամարտը», «Ուսանողն» ու «Երկունքը» խմբագրականներում, առաջնորդող հոդվածներում պարզորոշ և անթաքույց խոսում են այս մասին՝ չեշտելով քաղաքական կուսակցության համոզմունքների հարազատ անդրադարձը լինելու պարագան: Նրանք կարևոր լիազորություններ են հատկացնում կուսակցական մամուլին ու այն տարբերակում մամուլից առհասարակ՝ բնութագրելով նրա դերը, հատկանիշները, անցյալի փորձը և ներկայում նշմարվող թերությունները: Ըստ ՀՀԴ Կ.Պոլսի պարբերականների՝ մամուլի ծավալը կամ տպաքանակը հասարակական կյանքում կուսակցության ազդեցության աստիճանացույցն է: Հիշյալ տեսանկյունով են նրանք գնահատում դաշնակցական պարբերականներն ու գրում, թե՝ քանի որ դրանք, լույս աշխարհ գալով, պահպանում են գոյությունը և ընդարձակում տպաքանակը, ուստի դրանով ապացուցում են, որ կուսակցությունն աստիճանաբար իր ազդեցության ոլորտն է ներգրավում նորանոր զանգվածների[20]: Մամուլի նկատմամբ այսպիսի տեսակետով է բացատրվում «Ազատամարտի», «Ուսանողի» և «Երկունքի» նախընտրած բնաբանը. «Կուսակցական ըլլանք»: Նրանք որևիցե կուսակցության պատկանելը համարում են դարի քաղաքական մեծագույն առաքինությունը, որն անհրաժեշտ է հանրության առաջադիմությանը[21]:

Այսուհանդերձ, գաղափարական հիմքի վրա ստեղծված այս երեք թերթերը նեղ-կուսակցական չեն եղել: Նրանց արծարծած հիմնախնդիրներն այնքան բազմազան են ու բազմաբնույթ, որ ընդգրկում են հրատարակման ժամանակաշրջանում հայ ժողովրդին հետաքրքրող հարցադրումներ, երևույթներ, իրադարձություններ գրեթե բոլոր բնագավառներում քաղաքականությունից մինչև մշակույթ: Առհասարակ, ազգային քաղաքականության և մշակույթի հիմնահարցերը ՀՀԴ Կ.Պոլսի պարբերական մամուլի բովանդակությունը և անժխտելի արժանիքն են:

1909 - 1915թթ. Կ.Պոլսում լույս տեսնող ՀՀԴ Արևմտյան բյուրոյի պաշտոնաթերթ «Ազատամարտն» արտահայտում էր կուսակցության գաղափարները, տեսակետները երկրի կացության, կատարվող իրողությունների վերաբերյալ: Ղեկավարվելով «Ամենի ինչ ժողովուրդին համար և ժողովուրդին միջոցով» նշանաբանով՝ այն ձգտում է օսմանյան ազգերի

«Ժամանակը» (1906 - 1907), «Գործը» (1908 - 1909), «Նոր ուժը» (1914), Բաքվի «Գրոհը» (1906 - 1907), Ալեքսանդրապոլի «Ժայռը» (1909 - 1911), Կարինի «Հառաջը» (1909 - 1914) և այլն:

[20] Ազատամարտ, 17. VI. 1909, Ուսանող, 1909, № 2, էջ 119 - 123: Երկունք, 1912, № 1, էջ 27 - 30, № 2, էջ 50 - 53, 56:

[21] Երկունք, 1912, № 3, էջ 57 - 58:

արդար, իրավահավասար գործակցությանը, պետության արմատական բարենորոգմանը և հայ ժողովրդի մտավոր, կրթական մակարդակի բարձրացմանը: Նշված թվականներին «Ազատամարտը» եղել է ՀՀԴ Արևմտյան բյուրոյի պաշտոնական խոսնակը Թուրքիայում, իսկ «Ուսանողը» և «Երկունքը»՝ ՀՀԴ մասնաճյուղերը հանդիսացող՝ Եվրոպայի ու Կ.Պոլսի ուսանողական միությունների ամսաթերթերը : Նրանց ծննդյան գլխավոր դրդապատճառը և գործունեության անկյունաքարն իրենց մայր կուսակցության հիմնագրությունները ներկայացնելը, լուսաբանելն ու տարածելն էր, նաև՝ Կ.Պոլսում ու Եվրոպայի քաղաքներում սովորող դաշնակցական ուսանողների համախմբմանը և համագործակցությանը նպաստելը: Ամսաթերթերը պիտի աջակցեին ուսանողության, լայն իմաստով՝ երիտասարդության ինքնակրթությանն ու ինքնազարգացմանը և ազգի մտավոր սերուցքի հարատևությանը: Ըստ «Ուսանողի» ու «Երկունքի»՝ սրանք էին ուսանողական թերթերի և ժողովածուների առջև դրված խնդիրները, որոնցով պետք է օժանդակեին կուսակցական մամուլի դաստիարակչական ու քարոզչական ձեռնարկին՝ այն դյուրացնելով և լրացնելով նախապատրաստական աշխատանքով[22]:

Ամսաթերթերը պարզորոշ գրում են, որ իբրև ընդհանուր կուսակցության մի մասնիկը՝ իրենք հավատարիմ են ՀՀԴ-ի հավատամքին ու կրում են նրա բնորոշ գծերը և դրոշմը[23]: Ապա ավելացնում են, թե կտպագրեն այնպիսի նյութեր, որոնք չեն հակասի Դաշնակցության աշխարհընկալմանն ու կունենան գիտական (գրական) արժեք:

«Ուսանողը» և «Երկունքը» չեն տարվել միայն կուսակցական հիմնահարցերով: Նրանց էջերում տեղ են գտել իմաստասիրական, գրական-գեղարվեստական, հասարակագիտական զանազան աշխատություններ, ուսումնասիրություններ, հոդվածներ: Ընդհանուր առմամբ հիշյալ ամսաթերթերը դաշնակցական երիտասարդ մտավորականների տենչերի ու գաղափարների ամփոփ խտացումներն են: Իրենց հրապարակումներով նրանք դրսևորել են սեփական հայեցակետը սերնդակիցներին մտատանջող հարցերի, ժամանակի կարևորագույն հիմնախնդիրների, հայ ժողովրդի ճակատագրի, ազգային կուսակցությունների որդեգրած քաղաքականությունների դրական ու բացասական հետևանքների վերաբերյալ: «Ուսանողը» և «Երկունքը» կարդալիս անմիջապես զգացվում է, որ դրանք գրվել են ջահել, եռանդուն ու ինքնահաստատման ձգտմամբ համակված մարդկանց ձեռքով, որոնք, որպես արդեն պատրաստված և լուրջ քաղաքական գործիչներ, ներկայացնում են հասարակական վերափոխմանը մասնակցելու անհերքելի ունակություններ:

---

[22] «Ազատամարտ» օրաթերթի հիմնադրման, նրա նպատակների ու խաղացած գերի մասին մանրամասն տե՛ս Մ.Վ.Հովսեփյան, Կ.Պոլսի «Ազատամարտն» ազգային-ազատագրության ջահակիր (Ազատամարտ, 1991, № 38, էջ 8), նույնի՝ «Ազատամարտի» հասարակական-քաղաքական հավատամքը («Ազատամարտի» գիտատեսական «Միտք» հավելված, 1993, № 4, էջ 6 - 10), նույնի՝ «Ազատամարտ» թերթը (ՀՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 1994, № 1, էջ 61 - 71), նույնի՝ Արևմտահայերի ներազգային կյանքն «Ազատամարտի» էջերում (Նոր գար, 2000, № 2, էջ 156 - 158) :

[23] Ուսանող, 1912, № 1, էջ 254 - 260, Երկունք, 1912, № 1, էջ 30 - 31, № 4, էջ 96 - 99:

[24] Ուսանող, 1909, № 2, էջ 65 - 67:

«Ուսանողին» և «Երկունքին» բնորոշ է վիճաբանական բնույթը: Նրանք գաղափարակիցներին հնարավորություն են ընձեռել քննադատորեն անդրադառնալ ՀՀԴ տեսական ու գործնական մարտավարությանը, որով պիտի ինչ-որ չափով ջրի երես հանեին կուսակցության մեջ գլուխ բարձրացրած տարաձայնությունները, փորձեին հասկանալ և հարթել դրանք: Շատ դեպքերում «Ուսանողը» և «Երկունքը» ծայրահեղ են իրենց կարծիքներում, հաճախ՝ անհանդուրժող ու անվերապահորեն միակ ճշմարիտը երևալու հավակնող: Միմյանց դիտողություններ անելով հանդերձ՝ նրանք համագործակցության եզրեր են որոնել և աշխատել պետքական դառնալ Դաշնակցությանն ու Հայությանը : Իսկ դրա համար նրանք պիտի հաղթահարեին բավականաչափ դժվարություններ, ինչպես՝ միջավայրը, նյութականի բացակայությունը և տպարանային անհարմարությունները: Ամսաթերթերը լույս են տեսել հասարակական հիմունքներով, դաշնակցական ուսանողների աղքատիկ նյութական միջոցների ու դասերից խլված ժամերի հաշվին, մասնավոր տպարանի, ֆինանսավորող հովանավորի, կայուն բաժանորդագրության բացակայության և պատրաստի համարների իրացման խիստ դժվարին պայմաններում: Դրանք տպագրվել են ազգային պետականությունից զուրկ ժողովրդի՝ քաղաքական ըմբռնումներով բազմաշերտ ուսանողական միջավայրում: Ընդ որում, եթե «Երկունքը» հրատարակվել է Օսմանյան կայսրության մայրաքաղաքում՝ քաղաքական պայքարը ղեկավարող կուսակցությունների բուն կենտրոնում ու հնարավորություն է ունեցել անմիջականորեն և ուղղակիորեն մասնակցել դրան, ապա «Ուսանողը» (որը հիմնականում տպագրվել է Եվրոպայի տարբեր քաղաքներում) կտրված էր հայրենիքից: Այն ասես եղել է հարազատ եզերքից ժամանակավորապես բաժանված, հեղափոխական գործունեությունը խթանող հայկական իրականությունից կտրված տարագիր, որը մի տեսակ լսողի, վերլուծողի ու խորհրդատուի գործառույթ է կատարել: Այս հանգամանքը թուլացրել է Եվրոպայում սովորող հայ ուսանողների (մասնավորապես դաշնակցականների) հետաքրքրությունը Հայաստանում ծավալվող իրողությունների հանդեպ: Նրանց քաղաքացիական և քաղաքական անտարբերությունը հատկապես մեծացել է տեղի ուսանողական համայնքի բացասական ազդեցությամբ: Եվրոպայի ուսանողներից շատերը հեգնանքով են նայել քաղաքականությամբ զբաղվողներին՝ նախընտրելով մշակութային կամ գիտական պրպտումները: Սյուսներն օրերը սպանել են սրճարաններում, զվարճավայրերում:

«Ուսանողն» ու «Երկունքը» հրատարակվել են ահա այսպիսի արգելքներին կուլ չգնալով և դիմադարձ կանգնելով: Նրանք իրավամբ կարծել են, որ իրենց գոյությունը անհրաժեշտ է ժողովրդին: Ամսաթերթերը պետք է այնպես անեին, որ ՀՀԴ ուսանողական միությունները չվերածվեին կղզիացած, կյանքից կապերը խզած կազմակերպության, իսկ նրանց անդամները պահպանեին բարոյական ու մտավոր ուժերը գալիք հասարակական ու քաղաքական տեղաշարժերի համար :

---

[25] Ուսանող, 1912, № 7, էջ 254 - 260, 268 - 272, Երկունք, 1912, № 1, էջ 1 - 2, № 2, էջ 50 - 53, 56, № 4, էջ 96 - 99, 1913, № 10 - 11, էջ 281 - 284:

[26] Ուսանող, 1912, № 7, էջ 254 - 260, 268 - 288, 1909, № 3, էջ 119 - 220, Երկունք, 1912, № 1, էջ 30 - 31, № 4, էջ 96 - 99, 1913, № 10 - 11, էջ 281 - 284, 1912, № 2, էջ 33 - 34:

«Ուսանողը» ՀՀԴ Եվրոպայի ուսանողական միության ամսաթերթն էր: Այն հիմնադրվել էր այդ միության 1908թ. կայացած առաջին համագումարի որոշման համաձայն՝ նախ և առաջ նրա երեք նպատակներն իրագործելու համար.

ա) գրչով և խոսքով լուսաբանել ու տարածել ՀՀԴ ծրագիրն՝ իբրև ՀՀԴ Եվրոպայի ուսանողական միության ոչ պաշտոնական օրգան,

բ) նպաստել հայ ժողովրդով բնակված տարածաշրջանների և երկրների (Կովկաս, Տաճկաստան, Պարսկաստան) հասարակական-քաղաքական, տնտեսական հիմնախնդիրների, դրանց պատճառների ուսումնասիրությանն ու վերացմանը,

գ) ծանոթացնել և ընթերցողին իրազեկ պահել եվրոպական ընկերվարական տարբեր ուղղություններին, սրանց սկզբունքներին, ընտրած գործելակերպին, հաղթանակներին ու պարտություններին՝ դրանով ավելացնելով ՀՀԴ-ի ընկերվարական փորձը[27]:

Լույս է տեսել «Ուսանողի» ութը թիվ Փարիզում (№ 1, 2, 5), Ժնևում (№ 3, 4, 6, 8) և Կ.Պոլսում (№ 7) 1909 - 1914թթ.: Այն հրատարակվել է սկզբում որպես ոչ պարբերական (№ 1, 2), իսկ միության երկրորդ համագումարից (1909) հետո՝ որպես պարբերական հանդես, որը պետք է տպագրվեր երկու ամիսը մեկ: Սակայն նյութական, տեխնիկական միջոցների բացակայությունն ու խմբագրական աշխատանքներին ուսանողների ցուցաբերած անպատասխանատու վերաբերմունքը խանգարում են իրականացնել մտահղացումը: «Ուսանողը» ուշ-ուշ է երևում մամուլի հրապարակում: Յուրաքանչյուր համարի խմբագրականում թվարկվում են խանգարիչ, բայց օբյեկտիվ հանգամանքները: Դրանց հետևանքով արդեն № 6-ում տեղեկացվում է, թե ամսաթերթը կհրատարակվի տարին երկու անգամ[28]: № 7-ում «Ուսանողը» այլևս ՀՀԴ Եվրոպայի ուսանողական միության ամսաթերթ չէ, այլ՝ նույնանույթ ժողովածու: Նրա խմբագրականից պարզվում է, որ «Ուսանողի» կայուն հաճախականությունն անհրաժեշտ է, ուստի կտպագրվի միայն այն դեպքում, երբ հնարավորությունները կներեն[29]:

ՀՀԴ Եվրոպայի ուսանողական միությունը մեծ ուշադրություն է դարձրել «Ուսանողի» որակական առաջընթացին ու ամսաթերթի միջոցով կազմակերպության անդամների հետ անցկացվող կազմակերպական և դաստիարակչական աշխատանքների ապահովմանը: № 3-ի խմբագրականում «Ուսանողի» աշխատակիցները հայտարարում են, թե նախորդ երկու համարները հավանության են արժանացել ընթերցողների կողմից ու լիովին սպառվել են, իսկ № 6-ում գրում են, որ հրատարակված թվերի 85 տոկոսը վաճառվել է: Նրանք ամսաթերթի նկատմամբ դրսևորված բարձր պահանջարկը բացատրում են այն իրողությամբ, որ «Ուսանողը» գուշակել ու պատասխանել է հասարակության որոշակի շրջանակներին հուզող հարցերին: Խմբագրությունն ավելացնում է, թե ներդրած ջանքերի արդյունքը գովելի է, քանզի ամսաթերթը իր սպասելիքների վստահելի

---

[27] Ուսանող, 1909, № 1, էջ 1 - 3:
[28] Ուսանող, 1911, № 6, էջ 3 - 8:
[29] Նույն տեղում, 1912, № 7, էջ 3 - 6, 1909, № 3, էջ 213 - 216:

գրականն է՞ ու գրվում է կուսակցական և կուսակցությանը համակրող չերտավորված մտավորականության համար՝ աշխատելով բավարարել նրանց ամենքին[31]: Աշխատակազմը գոհ էր «Ուսանողից», թեև որոշ ուսանողներ առաջարկում են գագարեցնել նրա տպագրությունը, մյուսներ՝ հրատարակել ՀՀԴ Կ.Պոլսի ուսանողական միության «Երկունք» ամսաթերթի հետ համատեղ: Երկարատև բանավեճերից հետո երրորդ համագումարում (1912) որոշում են «Ուսանողը» լույս ընծայել իբրև ՀՀԴ Եվրոպայի ուսանողական միության հրատարակություն (400 - 600 էջով, մեկ տարվա համար): Որոշումը հիմնավորվում է ամսաթերթի հրատարակության անհրաժեշտությամբ: Համագումարի կարծիքով հարկավոր էր շարունակել «Ուսանողի» տպագրությունը, որովհետև այն արտահայտում էր եվրոպական քաղաքներում ցրված դաշնակցական ուսանողների կուսակցական հավատամքը, կապ էր հաստատում նրանց միջև, օգնում ընդունակ, բայց անվարժ գրիչների կատարելագործմանը: Այս ամենից բացի, ամսաթերթը իր վիճաբանական թեքվածությամբ ընթերցողների մեջ առաջ էր բերում կուսակցական աշխատանք կատարելու տրամադրություն, նախաձեռնողական ջիղ, հոգատարություն Հայաստանի ու արտասահմանի կենսական խնդիրների նկատմամբ: ՀՀԴ Եվրոպայի ուսանողների միության կարծիքով, «Ուսանողը» պետք է անպայման լույս տեսներ նաև այն պատճառով, որ ամսաթերթը դեռ չէր ավարտել ստանձնած առաքելությունը. զարգացնել երիտասարդ հայրենակիցների բնատուր դրական ընդունակությունները, ձևավորել նրանց աշխարհայացքը՝ առաջացնելով հայրենիքի վերածնությանը պիտանի հոսանք[32]:

Պատահական չէ, սակայն, որ դրվել է «Ուսանողը» «Երկունքի» հետ համատեղ հրատարակելու պահանջը, որովհետև դրանք երկուսն էլ հիմնադրվել էին գրեթե նույն նպատակներով՝ ընդգծված ընկերվարական ուղղվածությամբ: «Ուսանողը» «Երկունքին» համարել է իր մանրանկարը՝ խրախուսելով նրա ծնունդը և մաղթելով, որ այն աջակցի կուսակցական մամուլի միջոցով ՀՀԴ-ի ընկերվարական տեսակետները տարածելուն ու ամրապնդելուն: Իհարկե, «Ուսանողը» որոշ չափով ծայրահեղության գիրկն է ընկել և անգամ ինքն իրեն ինչ-որ տեղ հակասել, երբ եզրակացրել է, թե «Երկունքն» ավելորդ է հասարակության համար, քանզի նրանում արծարծվում են դաշնակցական պարբերականներում արդեն բարձրացված հիմնահարցերը[33]: Սակայն «Ուսանողի» ու «Երկունքի» համար վերը թվարկված ընդհանուր նպատակներից բացի՝ ՀՀԴ Կ.Պոլսի ուսանողական միության ամսաթերթը հրապարակ էր իջել, որպեսզի առավելապես հնչեցներ Դաշնակցության կողմից անտեսված ընկերվարական սկզբունքները[34]: Մի շարք հոդվածներում «Երկունքը» մանրամասն թվարկում է հիմնարկեքի շարժառիթները դրանք բխեցնելով առաջնայինից. լսելի դարձնել երիտասարդության ձայնը: Ըստ ամսաթերթի՝ երիտասարդ սերնդի ձայնը և պահանջներն ընկերվարական են ու քանի որ իբրև

---

[30] Նույն տեղում, 1909, № 1, էջ 45 - 48, 1911, № 6, էջ 3 - 8, 1909, № 3, էջ 129 - 132, 210 - 216:

[31] Նույն տեղում, 1912, № 7, էջ 3 - 6:

[32] Ուսանող, 1912, № 7, էջ 273 - 288, 1911, № 6, էջ 3 - 8:

[33] Ուսանող, 1912, № 7, էջ 254 - 260, էջ 268 - 272:

[34] Երկունք, 1912, № 1, էջ 30 - 31:

այդպիսին հարկ և պատշաճ ձևով չեն երևացել դաշնակցական նախընթաց մամուլում, ուստի դրանք հնչեցնելու համար է ասպարեզ դալիս «Երկունքը»[35]: Ամսաթերթի հոդածության գլխավոր առարկան ուսանողությունն ու երիտասարդությունն են, որոնց ընկերային-քաղաքական համոզմունքների ձևավորմանը և ազգի ապագան ծրագրող ուսանողության «երկունքին» են միտելու «Երկունքի» հրապարակումները: Ամսաթերթը գրում է, թե ինքը գալիք կարգերը երկնելու ունակ ուսանող սերնդի մտահղացումների ու երազների արձագանքն է[36]: Սերունդ, որն, ըստ ամսաթերթի, ուսումն ավարտելուց հետո պետք է անպայման վերադառնա գավառ, որպեսզի կուտակած գիտելիքների պաշարով երկնի Արևմտյան Հայաստանի վերածնունդը[37]:

ՀՀԴ Կ.Պոլսի ուսանողական միությունն իր համագումարներում քննարկել է ամսաթերթը հրապարակելու, բովանդակության և նախընտրած ուղղությանն առնչվող հարցերը, նշել թերությունները, բացթողումներն ու սխալները: Եթե ՀՀԴ Կ.Պոլսի ուսանողական միության տարեկան առաջին համագումարում (1912թ.) գովեստով են խոսել «Երկունքի» մասին, ապա երկրորդում (1913թ.), չուրանալով նրա խաղացած բարոյական, շաղկապող օղակի դերը Արևմտահայաստանի և Կ.Պոլսի դաշնակցական ուսանողների միությունների միջև, չանտեսելով ամսաթերթի՝ ընթերցողներին որոշ չափով գոհացնելու պարագան, հանգում են այն հետևությանը, թե «Երկունքը» նախ՝ չի կատարել բուն նպատակը, որովհետև համարյա տեղ չի հատկացրել կուսակցության ծրագրի պարզաբանումներին. քիչ է տպագրել գիտական հոդվածներ կամ գիտական, թարգմանական աշխատություններ, երկրի տնտեսական, կրթական, մշակութային հիմնախնդիրների վերաբերյալ ուսումնասիրություններ, ապա՝ եղել է ոչ թե Կ.Պոլսի ուսանողական միության մեծամասնության, այլ նեղ խմբակի՝ խմբագրության դիրքորոշումների արտահայտիչ: Թերությունները վերացնելու համար որոշվում են «Երկունքի» հետագա գործելակերպի ուղիները: Մասնավորապես առաջարկվում է ընդունել հետևյալ բովանդակությամբ նյութեր. ՀՀԴ-ի ծրագրային-տեսական հարցերին, պետության տնտեսական, կրթամշակութային վիճակներին առնչվող հասարակագիտական ու վիճաբանական հոդվածներ, վիճակագրական ուսումնասիրություններ, գիտական ինքնուրույն կամ թարգմանական աշխատություններ, գրական-գեղարվեստական բարձրարժեք ստեղծագործություններ, հայ և օտարազգի ուսանողների առօրյային ու միջազգային ընկերվարական շարժմանն անդրադարձող լուրեր, տեղեկություններ[38]: Այդուհանդերձ, «Երկունքը», ինչպես նաև «Ուսանողը», թերություններով հանդերձ՝ կարողացել են ինքնահաստատվել, ունենալ ընթերցողների կայուն շրջանակ: Նրանք հնարավորինս իրագործել են իրենց առջև դրված հիմնական խնդիրները՝ դառնալով դաշնակցական երիտասարդ մտավորականների, երիտասարդության սերուցքի նպատակների և գաղափարների ամփոփ խտացումը: «Ուսանողը», «Երկունքը» և «Ազատամարտը», 1909 - 1915թթ. լինելով քաղաքական պայքարում ՀՀԴ գաղափարաքարոզչական օժանդակող

[35] Նույն տեղում, 1912, № 2, էջ 56:
[36] Նույն տեղում, 1912, № 1, էջ 1 - 2, 1913, № 10 - 11, էջ 281 - 284:
[37] Նույն տեղում, 1912, № 2, էջ 33 - 34:
[38] Երկունք, 1912, № 6 - 7, էջ 187 - 192, 1914, № 7, էջ 186 - 187:

հիմնական գործոններից և իրենց կուսակցության գաղափարախոսները, առաջնորդվելով «Կուսակցական ըմբռնք» նշանաբանով, դարձել են ոչ թե նեղ-կուսակցական, այլ համազգային հիմնահարցերով մտահոգ, դրանց լուծմանը հետամուտ, հայ մտավոր ներուժը միավորել փորձող պարբերական մամուլի ներկայացուցիչներ:

АРП ДАШНАКЦУТЮН И ЕЕ ПЕРИОДИЧЕСКАЯ ПЕЧАТЬ, ИЗДАВАЕМАЯ В КОНСТАНТИНОПОЛЕ (1909 – 1915 ГГ.)

М.В.ОВСЕПЯН

Резюме

Армянская революционная партия Дашнакцутюн всегда высоко оценивала роль прессы в идеологических диспутах. Партия имела много газет и журналов. Газета "Азатамарт" издавалась в Константинополе в 1909 – 1915 гг. и являлась органом западного бюро, ежемесячная газета "Усанох" (1909 – 1914гг.) и журнал "Еркунк" (1912 – 1914гг.) являлись представителями студенческого союза Европы и Константинополя.

"Азатамарт", "Усанох" и "Еркунк" выражали взгляды, идеи партии и пропагандировали ее программу. Эти издания откликались на важнейшие события в мире и регионе. Они обращались к важнейшим социально-политическим проблемам Турции в 1909 – 1915гг., и конечно же к проблеме армянского народа и Армянского вопроса. Кроме общей направленности "Усанох" и "Еркунк" также освещали вопросы, волнующие молодых членов партии Дашнакцутюн.

Периодическая печать партии Дашнакцутюн, издаваемая в Константинополе в 1909 – 1915гг., была главным орудием в идеологической борьбе этой политической партии.